ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «13» հունվարի 2017 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 02-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի № 1269-Ն որոշման հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով և հաշվի առնելով Կենտրոնական և արևելյան եվրոպական ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության տնօրեն Մ. Քետատայի ս.թ. հունվարի 11-ի գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ֆինանսավորել Ակադեմիական և գիտական շարժունության միջազգային մրցույթին ներկայացված Սարգիս Վարդանյանի (ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ) հայտը՝ 757 632 (յոթ հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ ծավալով:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ ԳՊԿ աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ